

Խաչիկ Ա. Հարությունյան
Բանաս. գիտ. թեկնածու

ՀԱՅ ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԺԸ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ ՄԿՍՅԱԼ, ԵՎ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ

Նորահայտ բառեր Ժ-ԺԲ դարերի հիշատակարաններից*

Բանալի բառեր – գրիչներ, բառարանագրություն, պատմական բառագիտություն, բառակազմական կաղապարներ, գրաբար, միջին հայերեն:

Միւտք. հիշատակարաններն ու հայ բառարանագրությունը

ԺԸ. դ. երկրորդ կեսից հայ բառարանագրությունը թեակոխեց մի փուլ, որը մեթոդաբանորեն տարբերվում էր նախորդ շրջանի ավանդույթներից¹:

Կարևոր նորույթներից էր այն, որ Մ. Սեբաստացու հայտնի «Բառգիրք»-ից² հետո բառարաններում գլխաբառերին կից տրվող քերականական (խոսքիմասային պատկանելություն, հոլովմանն ու խոնարհմանն առնչվող նշումներ և այլն) ու բացատրական տեղեկություններից զատ՝ վկայակոչվող օրինակները սկսեցին արձանագրվել հիմնականում իրենց աղբյուրներով: Դրանց թվում էին նաև հայերեն ձեռագրերի հիշատակարանները՝ գրիչների, ծաղկողների, ընդօրինակման ժամանակի կամ հետագա ստացողների (մեկ բառով՝ հիշատակագիրների) այն տեղեկությունները, որոնք առնչվում են վերջիններիս արյունակցական և հոգևոր ընտանիքներին, ձեռագրաստեղծմանը, ժամանակի հասարակական-քաղաքական անցքերին և այլն: Գրավոր հուշարձանները, գրված լինելով տարբեր ժամանակներում և տարբեր անձանց կողմից, ունեն անմիօրինակ լեզու և ոճ: Մի

* Հոդվածն ընդունվել է տպագրության 16.11.17:

1 Այս ժամանակից սկսյալ՝ հայ բառարանագրությունը պայմանականորեն դասակարգվում է նաև ըստ նոր և նորագույն շրջափուլերի, որոնք համապատասխանաբար ընդգրկում են ԺԸ. դ. երկրորդ կեսից մինչև ԺԹ. դարակես, ապա նույն ժամանակվանից մինչև մեր օրերը, տես **Գասպարյան Գ. Կ.**, Հայ բառարանագրության պատմություն, Եր., 1968, էջ 11, [**Gasparyan G. K.**, Hay bafaranagrut'yan patmut'yun, Er., 1968, p. 11].

2 Տես **Սեբաստացի Մ.**, Բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, հատ. Ա., 1749, հատ. Բ., 1769: [**Sebastac'i M.**, Bargirk' haykazean lezui, Venetik, hat. A, 1749, hat. B, 1769].

կողմից՝ գրաբարի և ժամանակի խոսակցական տարբեր շերտերի ազդեցությունը, հիշատակագիրների կրթվածության աստիճանը, մյուս կողմից՝ հիշատակարանների ժանրային առանձնահատկություններն ու որոշակի կաղապար-բանաձևերի (կրկնվող բառեր, ոճեր, արտահայտություններ և այլն³) առկայությունն իրենց հետքն են թողել քննվող աղբյուրների լեզվական ընդհանուր նկարագրի վրա: Առանձին հիշատակագիրներ, սակայն, աչքի են ընկնում լեզվական ինքնատիպ ոճով, պատկերավոր մտածողությամբ և բառակազմական ունակություններով⁴, որի արդյունք են գրավոր այս աղբյուրներից քաղված և բառարաններում արձանագրված հազարավոր բառերը: Մխաված չենք լինի, եթե ասենք, որ չկա գրաբարին, միջին հայերենին, վաղ աշխարհաբարին կամ հայերենի հատկանվանագիտությանը նվիրված մի բառարան, որի աղբյուրների ցանկում հիշատակված չլինեն գրավոր այս հուշարձանները⁵: Ըստ որում, մի կողմ թողնելով հատկանվանական բառարաններն ու դրանց քննությունը, որ դուրս է սույն աշխատանքի նպատակից⁶, հիշատակարանների և հայ բառարանագրության առնչություններն ընդհանուր գծերով կարող ենք բնութագրել հետևյալ կետերով.

1. Բառեր, որոնք բառարանագրությանը հայտնի են միայն հիշատակարանային վկայություններով, ինչպես՝ **ՆՀԲ-ում՝ վարդապետախաւս, ծայրալրութիւն, որոտալիր, ներշրջապտոյտ, մշտակոխ** և այլն, **ԼՀ.ԳԲ-ում՝ աւետահոս, գունակցեալ, դժոխակիր, դժուարագրութիւն, ունախտ** և այլն, **ՄՀԲ-ում՝ գրչաւոր, գրքածախ, եղեգնագիծ, կոստղ, մելանագործ** և այլն, **ՆԲՎԱ-ում՝ միափունջ, ծերունիկ, շարակնու գիր** և այլն: Այս խմբին կարելի է դասել նաև ՀԲԲ-ում եզակի օրինակով նշվող այն

3 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններում տարածված կաղապարների մասին տես **A. Sirinian**, On the Historical and Literary Value of the Colophons in Armenian Manuscripts, in *Armenian Philology in the Modern Era, from Manuscripts to Digital Text*, ed. by V. Calzolari with the collaboration of M. E. Stone, Brill, Leiden–Boston 2014, pp. 76–85; **Id.**, Caratteristiche dei colofoni armeni e un gruppo in particolare: i colofoni della critica alle autorità politiche e religiose, in *OCA 299, Colofoni armeni a confronto*, a cura di Anna Sirinian, Paola Buzi, Gaga Shurgala, Roma 2016, pp. 18–19; **Kh. Harutyunyan**, Gli antroponomi nei colofoni armeni: gruppi semantici e nuovi nomi (աշխարհի հետ նույն ժողովածուում), pp. 47–50. **E. Van Elverdinghe**, Recurrent Pattern Modelling in a Corpus of Armenian Manuscript Colophons, in *Journal of Data Mining and Digital Humanities, Special Issue (2017)*, pp. 1–7.

4 Իբրև օրինակ՝ կարող ենք մատնանշել ՓԷ. դ. երկրորդ կեսի բեղմնավոր գրիչներից մեկին՝ Միքայելին, որի ընդօրինակած կամ ծաղկած երկու տասնյակից ավելի ձեռագրերի հիշատակարաններում գործածվել են հայ բառարանագրությանն անհայտ շուրջ երեք տասնյակի հասնող տարաբնույթ բառեր, տես **Հարությունյան Խ.**, Միքայել անվամբ ՓԷ. դարի երկու գրիչ, Եր., 2016, էջեր 113–117: **[Harut'yunyan Kh.**, Mik'ayel anvamb ŽĔ. dari erku grič', Er., 2016, pp. 113–117].

5 Այս տեսանկյունից բացառություն են, թերևս, արդի հայերենի բառարանները, որոնք, աղբյուրներիս ժամանակային առանձնահատկությամբ պայմանավորված, հասկանալիորեն չեն ընդգրկում դրանց նյութը, թեև պետք է նկատել, որ որոշ բառեր, արձանագրված չլինելով գրաբարի կամ միջին հայերենի բառարաններում, հանդիպում են հենց արդի հայերենի բառարաններում:

6 Հիշատակարանները, ինչպես հայտնի է, առատ նյութ են տրամադրել Հր. Աճառյանին՝ «Հայոց անձնանունների բառարան»-ը կազմելիս: Գրավոր այս աղբյուրներում վկայված անձնանունների քննությանն են նվիրված նաև հետևյալ հոդվածները՝ **Weitenberg J. J. S.**, Cultural Interaction in the Middle East as Reflected in the Anthroponomy of Armenian 12th–14th Century Colophons, in *Orientalia Lovaniensia Analecta 134. Redefining Christian Identity. Cultural Interaction in the Middle East since the Rise of Islam*, edited by J.J. Van Ginkel, H. L. Murre–Van Den Berg, T.M. Van Lint, Leuven–Paris–Dudley, MA 2005, pp. 265–273; **Harutyunyan Kh.**, Gli antroponomi nei colofoni armeni (տես ծյգ. 3), pp. 47–72: Հիշատակարանների տրամադրած հարուստ նյութի կիրառմամբ է նաև Գ. Ջահուկյանի հետևյալ արժեքավոր հոդվածը՝ **Ջահուկյան Գ.**, Բնիկ հայերեն արմատներով կազմված անձնանունները, ՊԻՀ, 1984 (4), էջեր 32–44: **[Jahukyan G.**, Bnik hayeren armatnerov kazmvac anjananners, PBH, 1984 (4), pp. 32–44].

բառերը, որոնց մատենագրական վկայություններն առայժմ հաստատվում են միայն հիշատակարաններով. այդպիսի բառերի թիվը մեծ է, ինչպես՝ **բանաբաղուրթին** [Հիշ. Ե-ԺԲ: 315 / ՀԲԲ, 1: 328], **կանխահրաւէր** [Հիշ. Ե-ԺԲ: 237 / ՀԲԲ, 2: 384], **սուղամասնեա** [Հիշ. Ե-ԺԲ: 251 / ՀԲԲ, 4: 247], **հրաթերթեան** [Հիշ. ԺԳ: 43 / ՀԲԲ, 3: 142], **բոլորապճնող** [Հիշ. ԺԳ: 43 / ՀԲԲ, 1: 382], **պատուաստաշէն** [Հիշ. ԺԳ: 43 / ՀԲԲ, 4: 71], **բազմավայելուչ** [Հիշ. ԺԳ: 85 / ՀԲԲ, 1: 310] և այլն⁷: Նկատենք, որ թեև ՀԲԲ-ի աղբյուրներում հիշատակարանները նշված չեն, այնուամենայնիվ առանձին դեպքերում բերվող վկայությունները համընկնում են հիշատակարանային տվյալների հետ: Նշենք մեկ օրինակ. գրաբարի, միջին հայերենի բառարաններում արձանագրված են **թագաւորահայր** [ՆՀԲ, 1: 789, ԱԲ: 314, ԲՍՀ: 215], **թագաւորորդի** [ԱԲ: 316, ԲՍՀ: 215, ՄՀԲ: 229] բառերը՝ համապատասխանաբար «արքայի հայր» և «արքայի որդի» իմաստներով: Այս ճանապարհով՝ **թագաւոր** և **եղբայր** բառերի միությանը 1244 թ. Ստեփանոս գրչի հիշատակարանում վկայված է **թագաւորեղբայր** բառը, որտեղ գրիչը նկատի ունի Սմբատ Գունդատարիին: Նշենք այդ հատվածը. «Ջստացող բազմահանձար և նրբաբան իմաստիցս՝ զՍմբատ **թագաւորեղբայրս** և գունդուստապլս Հայոց» [Հիշ. ԺԳ: 230]: Այս իմաստի առավել տարածված տարբերակը **արքաեղբայր**-ն է, որ հայտնի է հայերենի գրեթե բոլոր բառարաններին, մինչդեռ **թագաւորեղբայր**-ը արձանագրված է առաջին անգամ Մալխասյանցի բառարանում 2 իմաստով. դրանցից առաջինը հետևյալն է՝ «1. Թագաւորի եղբայրը: Սմբատ թագաւորեղբայր» [ՀԲԲ, 2: 73]: Այս նույն ձևով (առանց Սմբատ անվան) բառը գտնում ենք նաև Ժամանակակալից հայերենի բառարաններում [ԺՀԼԲԲ, 2: 120, ԱՀԲԲ, 1: 411]: Ըստ որում՝ դրանցից ոչ մեկի դիմաց նշված չէ, թե բառս որ շրջանից է վկայված (ՀԲԲ-ն Սմբատ գրելով՝ թերևս ակնարկում է): Այսպես կարելի էր և կարծել, թե գործ ունենք առնվազն 19-րդ դարի մի նորակազմ բառի հետ, մինչդեռ ինչպես տեսանք, **թագաւորեղբայր** բառը կիրառված է արդեն 1244 թ. այն իմաստով, որ վկայաբերում են Մալխասյանցը⁸ և հետագա բառարանները:

2. Բառեր, որոնք բառարաններում արձանագրված են մեկ օրինակով այլ աղբյուրից (այս կարգի բառերը հիմնականում վկայված են որևէ պատմագրի կամ կրոնակեղեցական բնույթի ինքնուրույն կամ թարգմանական երկերում), իսկ ձեռագրերի հիշատակարանները հաղորդում են այլ վկայություններ ևս: Այսպես, ՆՀԲ-ին **բերկրաբեր** բառը հայտնի է 10-րդ դարի պատմագիր Թ. Արծրունու «Պատմություն»-ից միայն [ՆՀԲ, 1: 485], մինչդեռ բառս 1194 թ. գործածել է նաև Ստեփանոս գրիչն իր հիշատակարանում՝ «Բազում բաղձանաք և բերկրաբեր սրտիս» [Հիշ. Ե-ԺԲ: 277]: **Խոհեմամիստ** բառը ՆՀԲ-ում արձանագրված է միայն 10-րդ դարի կաթողիկոս և պատմագիր Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմու-

7 Մալխասյանցի արժեքավոր բառարանում, ցավոք, գլխաբառերին կից տվող օրինակների աղբյուրները չեն նշվում, որ ինքնին շատ կարևոր է պատմական բառագիտության համար: Այս մասին տես նաև թագաւորեղբայր բառի առիթով ստորև մեր դիտարկումը:

8 Այստեղ տեղին է վերհիշել ՀԲԲ-ի առաջաբանում Մալխասյանցի արժեքավոր դիտարկումներից մեկը Գ. Փեշտմալձյանի բառարանի առիթով. «Փեշտմալձեանի բառարանը անլի հարուստ է բառերով, և բացատրությունները անլի որոշ են, բայց նա չունի վկայություններ, այնպես որ չի կարելի իմանալ, թե այսինչ բառը, որ Նոր Հայկազեանում չկայ, արդեօք որևէ հին հեղինակից է հանել յօրինողը, թե՛ նորաստեղծ գրաբար բառ է 19-րդ դարում ստեղծուած» [ՀԲԲ, 1: Ժ-ԺԱ]:

թյուն»-ից [ՆՀԲ, 1: 959], բառիս մեկ այլ կիրառություն գտնում ենք 12-րդ դարում՝ Որդանան գրչի հիշատակարանում՝ «Ձխտեմամիտ և զհսկող ձգնատրն Քրիստոսի զՍահակ» [Հիշ. Ե-ԺԲ: 332]: Նույն կերպ մեկ օրինակով է վկայված **բնաբոյս** բառը՝ գործածված 12-րդ դարի նշանավոր գործիչ Ն. Լամբրոնացու երկերից մեկում [ՆՀԲ, 1: 494], բառիս մյուս կիրառությունը հաղորդում է Սարկոս գրչի 1195 թ. հիշատակարանը. «ընդդեմ (sic!) ախտից բնաբոյս մարտ եղեալ» [Հիշ. Ե-ԺԲ: 281]: **Առատասեղան** բառը ՆՀԲ-ին հայտնի է միայն Բարսեղ Կեսարացու պահոց ճառերից [ՆՀԲ, 1: 295], 1214 թ. իր հիշատակարանում բառս գործածել է նաև Գրիգոր գրիչը. «[...] էր սա քաջ և յաղթող ի պատերազմի, առատածեռն, առատասեղան...» [Հիշ. ԺԳ: 88]: Իբրև եզակի վկայություն Ստ. Օրբելյանի պատմությունից ԼՀ.ԳԲ-ն արձանագրում է **հայրապետանիստ** բառը [ԼՀ.ԳԲ: 162], իսկ Յովհաննէս գրչի 1214 թ. հիշատակարանում գտնում ենք այս բառի ևս մեկ գործածություն. «[...] վարժեալ յաստուածապահ դղեկիս՝ հայրապետանիստ քաղաքիս Հայոց» [Հիշ. ԺԳ: 85]: Այսպիսի օրինակները բազմաթիվ են, դրանց համեմատությունն էլ՝ կարևոր, քանի որ ընդգծվում է բառերի գործածական լինելը, և այն, որ դրանք ծանոթ են եղել ժամանակի լուսավորյալ մարդկանց, գործածվել նրանց տարաբնույթ շարադրանքներում:

3. Բառեր, որոնք բառարանագրությանը հայտնի են ավելի ուշ վկայություններով, մինչդեռ ձեռագրաց հիշատակարանները տրամադրում են դրանց ավելի վաղ կիրառություններ: Այսպես, **սրտաջան** «սիրով, նվիրումով» բառը ԼՀ.ԳԲ-ում արձանագրված է 1352 թ. մի հիշատակարանից [ԼՀ.ԳԲ: 260], մինչդեռ նույն բառի ավելի վաղ կիրառությունը գտնում ենք 1198 թ. մեկ այլ հիշատակարանում [Հիշ. Ե-ԺԲ: 302]: **Յոզնատոչոր** «ոգևորված, մեծափափագ» ածականը ԺԴ. դարի վկայությամբ դարձյալ արձանագրված է նույն բառարանում [ԼՀ.ԳԲ: 207], բառիս ավելի վաղ կիրառությունը գտնում ենք Գեորգ գրչի 1113 թ. հիշատակարանում [Հիշ. Ե-ԺԲ: 142]:

Լմնել ժողովրդախոսակցական բառի վկայությունը ՄՀԲ-ում բերված է 1275 թ. վայոցձորյան մի արձանագրությունից [ՄՀԲ: 291], սակայն բառիս կիրառությունը վկայված է շուրջ մեկ դար ավելի վաղ՝ 1195 թ. ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարանում [Հիշ. Ե-ԺԲ: 284]:

Քարտող բառը ՆԲՎԱ-ում արձանագրված է երկու տարբեր հիշատակարաններից՝ համապատասխանաբար 1623 և 1693 թթ.⁹, մինչդեռ բառս **քարտուղ** ձևով վկայված է դեռևս ԺԴ. դարից: 1317 թ. Գլաձորում ընդօրինակված ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Րաբունոյ Կիրակոսի / Եւ Յովաննէս(sic!) քարտուղի»¹⁰: Եվս մեկ վկայություն գտնում ենք 1505

9 Բառարանը հղում է Գ. Սրվանձոյանցի «Թորոս աղբար» հայտնի երկը, որում հավաքված են տարբեր դարերի հիշատակարաններ. բերվող օրինակների թվականները քաղել ենք նշյալ երկից, հմնտ. **Սրուանձոնանց Գ.**, Թորոս աղբար Հայաստանի ճամբորդ, մասն Բ, Կ. Պոլիս, 1885, էջեր 330 և 366 [**Sruanjteanc՝ G.**, T'oros aḡbar, Hayastani čambord, hat. B, pp. 330, 366]: 1623 թ. հիշատակարանը տե՛ս նաև [Հիշ. ԺԷ, Բ: 119բ]:

10 ԺԴ. դարի հիշատակարանների հատորում **քարտուղի** բառը տպված է **քարտուղարի** ձևով: Բառս ծշտվում է Սատենադարանի ձեռագրացուցակի շնորհիվ. հմնտ. [Հիշ. ԺԴ: 127] և Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Սատենադարանի, հատ. Բ., կազմեցին՝ **Եզանեան Օ., Ջեյթունեան Ա., Այթաբեան Փ., Քէօշկերեան Ա.**, խմբագրութեամբ **Մնացականեան Ա., Եզանեան Օ., Ջեյթունեան Ա.**, ցանկերը՝ **Դերիկեան Վ.**, Եր., 2004, սյուն 223 [Mayr c'uc'ak hayerēn jeragrac՝ Maštoč'i anuan Matenadaran, hat. B, kazmec'in **Eganean Օ., Zeyt'uncan A., Ant'abean P՝., K'ēōškerean A.**, xmbagrut'eamb **Mnac'akanean A., Eganean Օ., Zeyt'uncan A.**, c'ankera **Dewrikan V.**, Er., 2004, syun. 223]:

թ. Զաքարիա գրչի հիշատակարանում, որտեղ վերջինս թվարկում է իր սիրելի ուսուցչի՝ Հովհաննես Մանգասարենցի՝ տարիների բեղմնավոր աշխատանքի պտուղները՝ ընդօրինակված ձեռագրերը, և անվանում նրան «քաջ քարտող» [Հիշ. ԺԵ, Ա: 587/ծնթ./]:

Օրինակները քիչ չեն, և նման համեմատությունները կարևոր են հատկապես բառերի ստեղծման և կիրառության պատմության տեսանկյունից, որը, անշուշտ, պատմական բառագիտության առանցքային հարցերից է: Ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, այս սկզբունքով է աշխատել անվանի աղբյուրագետ և բառարանագիր Ն. Բյուզանդացին. «Նոր հայկազեան բառարան»-ի առիթով կատարած իր սրբագրական աշխատանքների մեջ նա ոչ միայն հավելել է բազում նորահայտ բառեր, տվել արդեն իսկ արձանագրված բառերի նոր վկայություններ և իմաստային այլ տարբերակներ, այլև առանձին դեպքերում հիշյալ բառարանից ուղղակիորեն ջնջել է մի շարք գլխաբառեր կամ դրանց համար բերվող օրինակներ՝ նկատի ունենալով վերջիններիս ժամանակագրական կամ աղբյուրային անհամադրելիությունը գրաբարյան բառաշերտի հետ: Նշենք այդպիսի մեկ օրինակ ընդամենը՝ մնացյալը թողնելով այլ առիթի. Բյուզանդացին պարզապես գիծ է քաշել ՆՀԲ-ում արձանագրված **ազետակ / ագէտակ** [ՆՀԲ, 1: 3] բառահոդվածի վրա՝ այն համարելով զուտ ստորին (իմա՝ միջինհայերենյան) բառ¹¹ և տեղափոխել իր կազմած ստորին հայերենի բառարան [ԲՄՀ: 8], քանի որ նշյալ բառը գործածված է ռամկախառն լեզվով հայտնի «Գիրք վաստակոց» երկում, ուստի այն իրապես պետք է դիտել իբրև միջինհայերենյան շրջանին պատկանող բառ: Այս սկզբունքով են առաջնորդվել նաև Միջին հայերենի բառարանի հեղինակները՝ արձանագրելով **ազետակ**-ն իրենց բառարանում [ՄՀԲ: 13]:

Այսպիսով, հիշատակարանները մշտապես եղել են հայ բառարանագիրների ուշադրության կենտրոնում, որոնք առատորեն օգտվել են աղբյուրներիս ընձեռած հնարավորություններից¹²:

Այս ամենով հանդերձ՝ արձանագրենք, որ ձեռագրերի հիշատակարանների քննությունը շարունակում է ի հայտ է բերել բառարաններում չարձանագրված բազմաթիվ բառեր կամ բառատարբերակներ, որոնք

11 Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, սրբագրուած և ձոխացուած **Նորայր Ն. Բիւզանդացու** ձեռքով, հրատարակութեան պատրաստեց **Մինասեան Մ.**, հատ. 1, Ժնն, 1990, էջ 13: [Nor baġirk' haykazean lezui, srbagruac ew ճoxac' uac **Norayr N. Biwzandac'u** jerk'ov, hratarakut'ean patrastec' **Minasean M.**, hat. 1, Žnev, 1990, p. 13].

12 Որպեսզի պատկերացում կազմենք, թե ինչ քանակության մասին է խոսքը, հաշվեցինք միայն երկու բառարանում հիշատակարաններից քաղված բառերի ընդհանուր թիվը: Ըստ այդմ՝ մոտ 5500 բառ պարունակող ԼՀԳԲ-ում 215, իսկ մոտ 20000 բառ պարունակող ՄՀԲ-ում 1720 բառամիավոր քաղված է տարբեր դարերի հիշատակարաններից: Այս վերջինի առիթով նկատենք միայն, որ հիշատակարաններից բերված մեջբերումները երբեմն անհասցե են, մասնավորապես ԺԳ. դարի հիշատակարաններից գրեթե ոչ մեկը չունի հղում նշյալ հատորի այն էջին, որտեղ վկայված է բառը. գլխաբառին կից տրվում է բացատրությունը, վկայությունը, ապա՝ «ԺԳ հծհ»: Այնքան էլ պարզ չէ, թե ինչպես է նման բան ստացվել, քանի որ ՄՀԲ-ի առաջին հրատարակության ժամանակ (եր., 1987), ԺԳ. դարի հիշատակարաններն արդեն տպագրված էին (եր., 1984): Ուշագրավ է այն, որ ՄՀԲ-ի 2-րդ բարեփոխված հրատարակության մեջ (եր., 2009) այս բացը չի լրացվել, իսկ աղբյուրների ցանկում կարելի է կարդալ. «ԺԳ հծհ - ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Ա. Մաթևոսյան (անտիպ)» [ՄՀԲ: 6]: Այսպես մի շարք բառեր մնացել են «անհասցե», հմնտ. ալափել, գէշ, գրողիկ, գրչատր և այլ բառեր: Նույնն է նաև ԺԶ. դարի հիշատակարանների դեպքում, թեև այս դարի հիշատակարանները ցայսօր անտիպ են. հմնտ. բոռալ, գոտորվել, գրագրիկ, գրիչ բռնել, հացհան բառերը:

պարբերաբար ներկայացվում են հողվածների տեսքով¹³: Մեր այս աշխատանքն էլ նվիրված է նյութի քննությանը. նախ ներկայացնում ենք մոտ երեք տասնյակ նորահայտ բառեր ու դարձվածքներ Ժ.-ԺԲ. դարերի հիշատակարաններից, ապա տալիս դրանց բառակազմական կաղապարների ընդհանուր պատկերը:

1. Նորահայտ բառեր¹⁴

ԱՂՋԱՄՈՒԼԱԿ – ա., դժվարինաց, խրթին. «[...] աղջախոհակ այդոց ոմանք (թերևս ուղղելի է՝ ոմանց)» [Հիշ. Ե-ԺԲ: 91]:

Առաջին հերթին մեր ուշադրությունն այստեղ գրավում է **աղջ** «մութ, խավար» արմատի նոր վկայությունը: Հայտնի է, որ **աղջ**-ը անկախ կիրառություն չունի, հանդես է գալիս միայն բարդություններում՝ **աղջամուղջ** / **աղտամուղտ**, **աղջաղջ**, **աղջամղջութիւն** [ՆՀԲ, 1: 43]: Արմատին անդրադարձել են մի շարք ուսումնասիրողներ, այդ թվում՝ Աճառյանը (բխեցնում է **արջն** «սև» արմատից՝ համարելով կովկասյան փոխառություն. [ՀԱԲ, 1: 335-6]), Ջահուկյանը (չի ընդունում Աճառյանի ստուգաբանությունը, բխեցնում է հ.-ե. ***aghl-** «մութ, անպ, խավար» արմատից¹⁵), Հ. Մարտիրոսյանը (վկայակոչելով արմատի ստուգաբանության նախորդ փորձերը՝ առավել հավանական է համարում Մեյեի ստուգաբանությունը, ով իր հերթին արմատը բխեցնում է ***alghi-** ձևից¹⁶: Ըստ Մեյեի՝ **աղջ** արմատի կրկնությամբ և **մ**-ի միջարկումով է կազմված **աղջամուղջ** բառը¹⁷), Վ. Համբարձումյանը (արմատին անդրադառնում է աղտամուտ / աղջամուղջ բառի առիթով, որը համարում է կրկնավոր բարդություն՝ **ամ** մասնիկի միջարկումով՝ իբրև «թանձր խավար»)՝¹⁸ և ուրիշներ:

13 Տե՛ս, օրինակ, **Սարգսյան Ա.**, Նորահայտ բառեր հայերեն ձեռագրերի XIV-XV դդ. հիշատակարաններում, ՊԲՀ, 1993 (1-2), էջեր 35-42, **[Margaryan Al.,** Norahayt ba'ir hayeren jefagreri XIV-XV dd. hi'satakarannerum, PBH, 1993 (1-2), pp. 35-42], **Խաչատրյան Վ.**, 5-11-րդ դարերի ձեռագրերի հիշատակարանների բառապաշարը, Երիտասարդ լեզվաբանների հանրապետական III գիտաժողովի գեկուցումներ (Երևան, 2013 թ., հոկտեմբերի 2-3), Եր., 2013, էջեր 39-48 **[Xac'atryan V.,** 5-11-rd dareri jefagreri hi'satakaranneri barapašarə, Eritasard lezvabanneri hanrapetakan III gitəzo'tovi zekuc'umner (Erevan, 2013, hoktemberi 2-3), Er., 2013, pp. 39-48], **Հարությունյան Խ.**, 14-15-րդ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարանների բառապաշարի քննություն, «Ջահուկյանական ընթերցումներ», Հանրապետական գիտական նստաշրջանի գեկուցումներ (Եր., 2013 թ., մայիսի 22-24), Եր., 2013, էջեր 78-85: **[Harut'yunyan Kh.,** 14-15-rd dareri hayeren jefagreri hi'satakaranneri barapašari k'nnut'yun, Jahukyanakan ənt'erc'umner, hanrapetakan gitakan nstašrjani zekuc'umner Er., 2013, mayisi 22-24), Er., 2013, pp. 78-85].

14 Նորահայտ կոչում ենք այն բառերն ու բառատարբերակները, որոնք արձանագրված չեն հայերենի բառարաններում: Այդ բառերը ներկայացնում ենք բառարանային սկզբունքով՝ այբբենական կարգով. նշվում է խոսքի մասային արժեքը, ապա տրվում է համապատասխան բացատրությունը և բերվում վկայությունը: Անհրաժեշտության դեպքում արվում են նաև համեմատություններ բառարաններում վկայված այլ օրինակների հետ: Նկատենք, որ քննվող ժամանակաշրջանի հիշատակարաններում հայերենի բառարաններին անհայտ բառերի ու բառատարբերակների թիվն ավելին է, քան սույն հոդվածում բերվող բառացանկը, սակայն դրանց մի մասն իր վերոհիշյալ հոդվածում արձանագրել է Վ. Խաչատրյանը:


15 Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 111: **[Jahukyan G.,** Hayoc' lezvi patmut'yun. naxagrayin žamanakašrjan, Er., 1987, Էջ 11], [ՀԱԲ: 39].

16 Տե՛ս **Martirosyan H.**, Etymological Dictionary of the Armenian Inherited Lexicon, Brill, Leiden-Boston, 2010, pp. 37-39:

17 Տե՛ս **Մեյե Ա.**, Հայագիտական հետազոտություններ, (կազմեց, ֆրանսերենից թարգմանեց և ծանոթագրեց Մինասյան Մ., խմբագրությամբ Գ. Ջահուկյանի), Եր., 1978, էջեր 154 և 92: **[Meye A.,** Hayagitakan hetazotut'yunner (kazmec', franserenic' t'argmanec' ew canot'agrec' **Minasyan M.,** xmbagrut'yamb **Jahukyan G.**), Er., 1987, pp. 92, 154].

18 **Համբարձումյան Վ.**, Հայերենի բառաքննական և ստուգաբանական ուսումնասիրություններ,

Այսպիսով, **աղջամուղջ** բառը, ըստ ամենայնի, ձևավորվել է նախ **աղջ** արմատի պարզ կրկնությամբ՝ **աղջաղջ** ձևով, որն արձանագրված է բառարաններում [ՆՀԲ, 1: 43, ԱԲ: 19], ապա (ա)մ մասնիկի միջարկումով ստացվել է ***աղջամաղջ**-ը, որից էլ ա և ու ձայնավորների հերթագայությամբ՝ **աղջամուղջ**-ը (սրանից էլ իր հերթին **աղջամղջին** ածականը՝ ու > ը հնչյունափոխությամբ, հմմտ. մութ > մթին): Ըստ որում՝ ա > ու հերթագայությունը եզակի չէ (հմմտ. սպառ սպուռ, արդի հայերենում՝ մանրմունր և այլն): Եթե **աղջաղջ**-ն ու **աղջամուղջ**-ը ունեն մատենագրական վկայություններ, ապա **աղջամաղջ**-ը (ըստ էության՝ այս բառերի միջին օղակը), հայտնի չէ հայերենի բառարաններին. վերջերս երկու տարբեր Շարակնոցներում նկատեցինք հիշյալ տարբերակը, ավելի ստույգ՝ **աղջամաղջին** ածականը. Ներսես Շնորհալու «Երգ ցերեկին անտարանացն» շարականի «Եւ զիս հանցես, Տէր, ընդ նոսին/ Բանտէ մեղաց աղջամղջին»¹⁹ հատվածում Մաշտոցյան Մատենադարանի Ը^մ 7034 և Ը^մ 1579 Շարակնոցները **աղջամղջին** բառի փոխարեն ունեն **աղջամաղջին** տարբերակը (տե՛ս ՄՄ, Ը^մ 7034, 110բ, 1310 թ., Կիլիկիայ՝ Ձորոյ վանք, Ը^մ 1579, 118բ, 1500 թ., գրչության վայրն անհայտ)²⁰:



ՄՄ, Ը^մ 7034, 110բ

Այս օրինակը դարձյալ խոսում է **աղջամուղջ** բառի՝ **աղջ** արմատի կրկնությամբ կազմված լինելու օգտին²¹:

Դառնալով մեր վկայաբերած **աղջախոհակ** նորահայտ բառին՝ նշենք, որ այն լրացնում է **աղջ** արմատով բարդված բառերի թիվը՝ ընդգծելով վերջինիս «մթին», երկրորդաբար նաև՝ «դժվար, խրթին» իմաստները:

ԱՆՍԱԿԱՆԱԿԷՍ – մ., անսպառաբար, անվերջանալիորեն. «[...] արտաքս հեղոյր անսպառապէս» [Հիշ. Ե-ԺԲ: 157]:

ՆՀԲ-ն –բար վերջածանցով գիտի **անսպառաբար** բառը՝ Նարեկացու «Մատյան»-ից [ՆՀԲ, 1: 237]:

ԱՌԱՔԵԼԱԳԻԾ – ա., առաքյալների կողմից գծված, գրված. «Եւ գրեցաւ ի ՈՒԷ. (1198) թուիս [...] առաքելագիծ մատենիս» [Հիշ. Ե-ԺԲ: 294]:

Եր., 2012, էջեր 129–133 [Hambarjumyan V., Hayereni ba ak'nnakan ew stugabanakan usumnasirut'yunner, Er., 2012, էջեր 129–133]:

19 Մատենագիրք հայոց, հատ. Ը., Շարական, կազմեցին՝ **Ներսիսեան Վ., Մաղոյեան Գ.**, խմբագիր՝ **Մարկեան Ա.**, Աթիլիսա-Լիբանան, 2007, էջ 187: [Matenagir' hayoc', hat. Յ., Šarakan, kazmec'in **Nersisean V., Madoyean G., xmbagir Madoyean A.**, Ant'iliias-Libanan, 2007, pp. 187]. Շարակնոցի այս և նախորդ հրատարակություններում **աղջամղջին** է միայն:

20 Շարակնոց մատյանները դարերի ընթացքում ամենաշատ ընդօրինակվածներից են, ներկայումս դրանց թիվն անցնում է 1000-ից. միայն Մաշտոցյան Մատենադարանում, մեր հաշվումների համաձայն, պահվում է ավելի քան 400 միավոր Շարակնոց: Մենք ստուգել ենք ընդամենը մեկ տասնյակ ձեռագրի տվյալ, ուստի գրեթե վստահ ենք, որ **աղջամաղջին** բառի վկայությունը նշյալ ձեռագրերով չի սահմանափակվում:

21 Աղջամուղջ բառի մեջ, **աղջ** առաջին արմատից բացի, Ջահուկյանը կասկածելի է համարել **մուղջ** բաղադրիչը՝ հնարավոր համարելով դրա *mol նախաձևից ծագած լինելը, տե՛ս **Ջահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 138: [Jahukyan G., Ibid, pp. 138].

ԱՐՏԱՏՐԵԼ – բ., դուրս բերել, ասել, ի մի բերել. «Տեղեակ բոլոր իմաստից էից հոգուվ արտատրեաց գընդհանուրս» [Հիշ. Ե-ԺԲ: 251]:

Բառարանագրությանը հայտնի են **արտատրություն** գոյականն ու **արտատունալ** ածականը, որոնք նշանակում են «արտահոսություն կամ ի վերայ բերեալ, ասացեալ» [ՆՀԲ, 1: 380, ԱԲ: 146, ՀԲԲ, 1: 284]: **Արտատրել** բայը նախածանցմամբ (արտ-) կազմված է **տալ** բայի **տուր** արմատական ձևից բայական –ել վերջավորությամբ (հմնտ. բացատրություն – բացատրել, պարզևատրություն – պարզևատրել [ՀԱԲ, 4: 357]): Բառս պատճենում է հուն. *ἐκδίδωμι* բառի²²:

ԱԲ-ում արձանագրված է **արտատուն** բայը [ԱԲ: 146], որից էլ հավանաբար վերևում հիշված **արտատունալ** դերբայական ձևն է կազմվել:

ԲԱՐԵՀԱՄԲԱԿԵԱԼ – ա., բարի համբավ ունեցող, բարեհամբավ. «Ջբարեհամբաւեալ քահանայքն (sic!) զՍիմէոն և զՍիոն» [Հիշ. Ե-ԺԲ: 315]:

Ըստ էության այս բառը **բարեհամբաւ** ածականի տարբերակ է և լրացնում է այս շարքի բառերի թիվը (ինչպես՝ բարեհամբաւել, բարեհամբաւություն, բարեհամբաւագոյն): Նկատենք, որ **բարեհամբաւ** և **բարեհամբաւեալ** բառերի հականիշ չարահամբաւ [ՆՀԲ, 2: 567, ԱԲ: 667, ՀԲԲ, 4: 13], վատահամբաւ [ՀԲԲ, 4: 304, ԱՀԲԲ, 2: 1362] բառերից գատ, 981 թ. մի հիշատակարանում վկայված է **պղծահամբաւ** նորահայտ բառը (տես ստորև **որոմնարկու**-ի օրինակը)²³:

ԲՆԱԲԱՆԱՎԱՆՈՒԹԻՒՆ – գ., բնական բանականություն, իմացություն, քննախոսություն. «Քանզի ոչ է դժուարին բանաստեղծաց [...] բնաբանականութեամբ և ուսումնականութեամբ աստուածաբանել» [Հիշ. Ե-ԺԲ: 90]:

ԲՀԼ-ում և ՆՀԲ-ում վկայված է **բնաբանական** ածականն իբրև «ի բնէ բանական, իմացական» [ԲՀԼ, 1: 156, ՆՀԲ, 1: 494, ԳՓ.ԲՀԼ, 1: 206]: Բառարաններում նշվում է նաև **բնաբանություն** գոյականը՝ որպես «քննախոսություն, քննախոսություն» [ԲՀԼ, 1: 156, ՆՀԲ, 1: 494, ԱԲ: 190, ՀԲԲ, 1: 376 և այլն]: Բերվող օրինակը լրացնում է այս բառացանկը:

ԳԱՂԱՓԱՐ ԱՌՆՈՒԼ – ընդօրինակել, գրչագրել, գաղափարել. «Եթէ գաղափար առնուցուք, զգրիչս և զստացիչս [...] անմոռաց յիշմամբ թողություն հայցեցէք մեղաց մերոց» [Հիշ. Ե-ԺԲ: 193]:

Դարձվածքս հաճախադեպ է հիշատակարաններում: Գաղափար բառը «օրինակ, կաղապար» իմաստով վկայված է հայերենի մի շարք բառարաններում [ՆՀԲ, 1: 523, ԳՓ.ԲՀԼ, 1: 222, ԱԲ: 201, ՀԲԲ, 1: 407, ԳՀԲ: 176 և այլն], բայց դարձվածային այս տարբերակը արձանագրված չէ: Դրա փոխարեն բառարաններում վկայված է նույն իմաստն արտահայտող **գաղափարել** բայը:

ԳՈՒՆԱԳՈՐԾԵԼ²⁴ – բ., ջանք թափել, ձգնել. «[...] ի հուաքեալ սակս այնորիկ յոքնակի և մեծ ջանիւ, աշխատութեամբ, և գունագործել ոգուվ

22 Sŋu **Bailly A.**, Dictionnaire Grec-Français, Hachette, 1935, p. 614a:

23 Sŋu **Խաչատրյան Վ.**, նշվ. աշխ., էջ 46: [**Xač'atryan V.**, *ibid.*, pp. 46].

24 Բառս հիշատակարանում տպված է «**գանագործել**» ձևով: Վրիպակ է. ձեռագրի նկարագրության մեջ գրված է **գունագործել**, տես Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հատ. Ե., կազմեց՝ **Եգանեան Օ.**, խմբագրութեամբ՝ **Քեօսէեան Յ., Ղազարոսեան Ա., Հայրապետեան տ. Շահէ քի.**, ցանկերը կազմեց՝ **Դերիկեան Վ.**, Եր., 2009, սյուն 409: [Mayr c'uc'ak hayerēn jeragrac' Maštoc'i anuan Matenadarani, hat. E, kazmec' **Eganean Օ.**, xmbagrut'eamb **K'eōsēean Y.**, **Ķazarosean A.**, **Hayrapetean t. Šahē k'hy.**, c'ankeṛē kazmec' **Dewrikan V.**, Er., 2009, syun 409].

չափ» [Հիշ. Ե-ԺԲ: 309]:

Կազմված է **գուն** արմատի, հոդակապի և **գործել** բայի միությանը: **Գուն** արմատը Աճառյանը մեկնում է իբրև «ջանք, ճիգ, փոյթ» [ՀԱԲ, 1: 592], այդ նույն իմաստով գուն գործել, գուն դնել հարադրությունները վկայակոչում են Հայկազյան բառարանի հեղինակները [ՆՀԲ, 1: 580]: Միասին գրությամբ՝ գունգործել ձևով, արձանագրված է Մեղրեցու բառարանում՝ «մարտ ի վերայ դնել կամ մեծ ճգնություն առնել» բացատրությունը [ԲՀ: 70]: Հիշատակարանում վկայված այս բառը նույնի հոդակապավոր բարդությունն է՝ մատենագրական ստույգ վկայությամբ:

ԴՐՈՒԱՏԱԶԱՐԴ – ա., դրվատանքով զարդարյալ. «[...] եզակ և եռանձնեայ աստուածութեանն, որում դրուատագարդ և շնորհանուէր երկրպագութիւն» [Հիշ. Ե-ԺԲ: 251]:

Իբրև հոմանիշ կարելի է դիտել **դրուատայեղց** [ՆՀԲ, 1:644, ԱԲ:256], **դրուատալից** [ՀԲԲ,1:546] բառերին:

ԵՊԵՐԱՆՔ ԴՆԵԼ – քամահրել, այպանել. «Այլ եթէ խիստ գիտնաւորն ես, եպերանս մի դնել...» [Հիշ. Ե-ԺԲ: 151]:

Հայերենի մի շարք բառարաններում [այդ թվում՝ ԲՀԼ, 1: 242, ՆՀԲ, 1: 660, ԱԲ: 262, ՀԲԲ, 1: 564, ԱՀԲԲ, 1: 328 և այլն] արձանագրված է **եպերանք** գոյականը, որից նաև **եպերել** բայն ու այլ բառատարբերակներ, որոնց մեջ վերոնշյալ դարձվածը վկայված չէ:

ԵՐՓՆԱԶԱՆՅ – ա., բազմագույն, երփներանգ. «զոր, ըստ արիւնի երփնագանց և պայծառացուցիչ ծաղկանց, ի միասին հաւաքեալ է» [Հիշ. Ե-ԺԲ: 245]:

Նկատելի է, որ բառս կազմված է **երփն** և **զանց** արմատների միությանը, թեև մեր կարծիքով, սպասելի պետք է լիներ -(ա)զան վերջավորությանը **երփնազան** բառը: Մի շարք բառարանների հայտնի են երփնազանեալ, երփնազանագեղ բառերը [ՆՀԲ, 1: 726, ԱԲ: 282, ՀԲԲ, 1: 604], որոնց համեմատությամբ կարելի է ենթադրել նաև երփնազան բառի գոյությունը (չենք բացառում նաև պարզ շփոթը **զան** և **զանց** բաղադրիչների միջև), որ առանց վկայության արձանագրված է միայն Է. Աղայանի բառարանում [ԱՀԲԲ, 1: 358]:

ԶՈՒԱՐՃԱԾԱՂԻԿ – ա., առույգ, փարթամ. «[...] որպէս վայել էր իւրում զուարթ և զուարճածաղիկ պլեացն» [Հիշ. Ե-ԺԲ: 293]:

Բառս ստեղծված է աստվածաշնչյան հետևյալ հատվածում գործածված **զուարթածաղիկ** բառի նմանությամբ՝ «ըստ զուարթածաղիկ պլեացն զուարճացելոց» [Մկ. Բ. գրք., Զ. 23]. **թ** և **ճ** տառերի փոփոխությամբ Յակոբ գրիչը կազմել է **զուարճածաղիկ** բառը:

ԸՆԴԱԻՐԻՆԱԿԱԳԻՐ – գ., նախօրինակի գրիչ, ընդօրինակող «ի յիշատակարանէ ընդարիւնակագրաց մի պակասեցուցանէք գլիշատակն նորա» [Հիշ. Ե-ԺԲ: 137]:

Մի շարք բառարաններ գիտեն բառիս **օրինակագիր** տարբերակը միայն իմանտ. ՆՀԲ, 2: 1034, ԱԲ: 847, ՀԲԲ, 4: 618]:

ԽԱԶԸՆԿԱԼ – գ., խաչակիր. «խաչընգալքն փութով գնան յերուսաղէմն վերնական» [Հիշ. Ե-ԺԲ: 250]:

Բառս հիշատակում է միայն Մալխասյանցը, այն էլ ածականական

կիրառությամբ՝ իբրև հոմանիշ **խաչազգեսց** բառին [ՀԲԲ, 2: 243]:

ԱՎԵՏԱԿԱՍՄ – ա., հաշտություն կամեցող, խաղաղասեր. «Յին հայեաց, Տէր հաշտական» [Հիշ. Ե-ԺԲ: 192]:

Բառս առաջին անգամ հանդիպում է Կոզմա գրչի՝ 1166 թ. Հռոմկլայում ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում: Սյուս վկայությունը գտնում ենք կիլիկյան հայտնի գրիչ և մանրանկարիչ Թորոս Ռոսլինի 1256 թ. հիշատակարանում՝ գրեթե նույնպիսի բովանդակությամբ՝ «Եւ յին նայեա, Տէր հաշտական» [Հիշ. ԺԳ: 286]: Այս հանգամանքով պայմանավորված՝ կասկածելի է թվում 1248 թ. դարձյալ Հռոմկլայում, բայց այս անգամ Կիրակոս (Կիրակոս) գրչի ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում «Եւ յին նայեա, Տէր, հաշտ ականբ» նախադասությունը [Հիշ. ԺԳ: 241], ավելի ստույգ այն հատվածը, որտեղ սպասված **հաշտական** բառի փոխարեն հրատարակված է «հաշտ ականբ», որով ակնհայտորեն այլ իմաստ է ստացվում²⁵: Ա. Մաթևոսյանի նշման համաձայն՝ սույն հիշատակարանն ինքը քաղել է Գ. Հովսեփյանի կազմած «Յիշատակարանք ձեռագրաց» ժողովածուից: Ստուգելով նշյալ աղբյուրը՝ միանգամայն պարզ է դառնում, որ «հաշտ ականբ»-ը առաջ է եկել Հովսեփյանի միջամտությամբ. այդ մասին է վկայում տողատակի համապատասխան ծանոթագրությունը²⁶: Բանն այն է, որ անվանի բանասերն իր հերթին հիշատակարանը վերցրել է Ա. արք. Սյուրմեյանի ձեռագրացուցակից, ուր մեզ հայտնի նախադասության մեջ բառս տպված է **հաշտական** ձևով²⁷: Մնում է միայն ենթադրել, որ Գ. Հովսեփյանին **հաշտական** բառն անհայտ է եղել մատենագրության մեջ վկայված չլինելու պատճառով, որն էլ իր հերթին առաջ է բերել նոր ենթադրություն՝ «հաշտ ականբ» տարբերակով: Իբրև այս վարկածի համար կովան՝ կարելի է ընդգծել նաև այն, որ վերևում մեր հիշատակած Կոզմա գրչի 1166 թ. ձեռագիրը Հովսեփյանի այս ժողովածուում արձանագրված չէ, իսկ սյուս՝ 1256 թ. ռոսլինյան ձեռագիրը, բնականաբար, դուրս է «Յիշատակարանք ձեռագրաց»-ի ժամանակային սահմաններից:

Այսպիսով, տարբեր ժամանակների երեք տարբեր գրիչների հիշատակարաններում միանման այս կաղապարի առկայությունը հուշում է, որ ամնվազն Հռոմկլայում այն գործուն է եղել, իսկ **հաշտական** ածականը հայտնի է եղել ժամանակի գրիչներին:

ՀՈԳԵՏՈՒԻՉ – ա., հոգի տվող, հոգեշնորհ. «[...] գրեալ ի մատենիս յայսմ գտորբ և գտենչալի և զհոգետուիչ բանքս» [Հիշ. Ե-ԺԲ: 39]:

ՀՈԳԻԱՍՏԻՆ – ա., հոգեանունդ. «Ո՛վ հարսն Յիսուսի [...], հոգիաստին սնեալ կաթամբ և սնեալն զեղեցկածաղիկ աստուածազարդ բուրաստանին» [Հիշ. Ե-ԺԲ: 266]:

Մի շարք բառարաններում արձանագրված են նաև հոգեսնոյց, հոգես-

25 Մաշտոցյան Մատենադարանում են այսօր պահվում Կոզմա գրչի և Ռոսլինի ընդօրինակած նշյալ Ավետարանները (համապատասխանաբար՝ ՄՄ, Հ^ֆ 7347 և ՄՄ, Հ^ֆ 10450): Բնականաբար տեղում վերստուգեցինք մեզ հետաքրքրող հատվածը՝ բացառելով որևէ թյուրըմբռնում:

26 Տե՛ս [Յովսեփյանի] Գ. Ա. կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, հատ. Ա. (Ե. դարից մինչև 1250 թ.) Անթիլիաս, 1951, սյուն 981: [Yovsēp‘ean G. A kat‘otikos, Yiṣatarank‘ jeṙagrac‘, hat. A (E. daric‘ minč‘ew 1250 t‘), Ant‘ilias, 1951, syun. 981].

27 Տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի և Անթիլիասի ու մասնաւորաց, հատ. Բ., կազմեց Միրմէեան Ա. արք., Հալէպ, 1936, էջ 6ա: [Mayr c‘uc‘ak hayeren jeṙagrac‘ Halēpi ew Ant‘ilias i masnaworac‘, hat. B, kazmec‘ Siwrmēean A. ark‘, Halēp, 1936, pp. 6a].

նունդ բառերը՝ իբրև հոգով սնող կամ հոգով սնյալ [հմմտ. ԲՀԼ, 1: 543, ՆՀԲ, 2: 112, ԳՓ.ԲՀԼ, 2: 99, ԱԲ: 501, ՀԲԲ, 3: 122, ԳՀԲ: 432]: Ուստի **հոգիաստին** բառի եզակի վկայությունը կարելի է հոմանիշ դիտել նշյալ բառերին: Նկատենք, որ բառակազմական տեսանկյունից սպասելի էր բառավերջի **ի** ձայնավորի և **ա** հոդակապի ձուլմամբ՝ հոգեստին ձևը, սակայն **ի** և **ա** ձայնավորիների օրինաչափ ձուլում բերվող օրինակում տեղի չի ունեցել (տե՛ս ստորև՝ 2-րդ բաժնում):

ՀՈՐԹՎԵՆԻ – գ., հորթի կաշի՝ իբրև գրչության նյութ, մագաղաթ. «ողորմեայ Կիրակոս կաշեգործին և ծնողաց իւրոց, որ գհորթվենիս շնորհեց(sic!) գրոցս» [Հիշ. Ե-ԺԲ: 316]:

Գրաբարի և միջին հայերենի բառարաններին անհայտ է բառս: Այն **հորթենի** տարբերակով առաջին անգամ արձանագրված է Մալխասյանցի բառարանում՝ «հորթի միս» նշանակությամբ [ՀԲԲ, 3: 136]: Ժամանակակից հայերենի բառարաններում է միայն, որ տրվում է նաև բառիս «հորթի կաշի» իմաստը [ԺՀԼԲԲ, 3: 383, ԱՀԲԲ, 1: 897]: Ըստ էության՝ ԺԲ. դարի այս հիշատակարանում արձանագրված է բառիս առաջին կիրառությունը՝ իբրև գրչանյութ:

ՅՈՒՆԱՆՈՐՏԻԿ – ա., բազմատեսակ խորտիկներով լեցուն. «սեղան ամենալի և յոգնախորտիկ» [Հիշ. Ե-ԺԲ: 181]:

ՅՈՒՆԱՅԱՆՑ – ա., բազմամեղ, հոգնամեղ. «Զշարագծող սուրբ Աւետարանիս գյոքնայանց պարտաւորս Աւետիս [...] յիշեսցիք» [Հիշ. Ե-ԺԲ: 219]:

Հիշատակարաններն առատ են այսօրինակ բառերով. ավելի տարածված են բազմամեղ, յոգնամեղ, մեղսաթաւալ, մեղսաներկ ու նման բառերը (տե՛ս ստորև՝ 2-րդ բաժնում): Սրանց թվին պետք է հավելել նաև մեկ անգամ վկայված **յոգնայանց** բառը:

ՆԱՀԱՏԱԿԱՄԷՐ – գ., 1. նահատակներին սիրող, 2. առաքինասեր, քաջասեր. «Ո՛վ նահատակասերք (sic!), գստացողքս և զծնողսն մեր յիշեսցիք ի Քրիստոս» [Հիշ. Ե-ԺԲ: 285]:

Հիմքի **նահատակ** բառը բազմիմաստ է, և դժվար է այս դեպքում նրա այդ իմաստներից մեկին միանշանակ նախապատվություն տալ, բայց հիշատակարանային բնույթով պայմանավորված՝ առավել հավանական է նրա «առաքինասեր» իմաստը:

ՇԱՐԱԳԾՈՂ – գ., գրիչ, շարքով գրող (տե՛ս վերը՝ **յոգնայանց**-ի օրինակը): Ընդհանրապես, գրավոր այս հուշարձաններում գրիչներն իրենց անվանում են տարբեր բառերով՝ գծող, ընդօրինակող, շարող և այլն: **Շարագծող**-ն էլ, որ, անշուշտ, գրաբարյան շարագծել բայի [հմմտ. ՆՀԲ, 2: 468, ԳՓ.ԲՀԼ, 2: 442, ԱԲ: 632] ենթակայական դերբայից է ձևավորվել, ինչպես և այս կարգի մյուս բառերը (հմմտ. հուն. *συγγραφεύς* և վերջինի հյ. համարժեքը՝ շարագրող-ը²⁸, որոնք դարձյալ նշանակում են «շարքով գրող». ըստ որում՝ շարագրող-ը ևս արձանագրված չէ քննվող բառարաններում), լրացնում է «գրիչ» մասնագիտական անվան հոմանիշների թիվը:

ՇՆՈՐՀԱՊԱՏԻ ԱՌԵՈՒԼ – շնորհներով պատել, շնորհաբաշխել. «շնորհապատիւ առնով սովաւ զփառս անտրտում» [Հիշ. Ե-ԺԲ: 54]:

28 Տե՛ս Մուրադյան Գ., Հունարանությունները դասական հայերենում, Եր., 2010, էջ 36: [Muradyan G., Hunabanut'yunnerə dasakan hayerenum, Er., 2010, pp. 36].

ՇՆՈՐՀԱՆՈՒԷՐ – ա., շնորհներ նվիրող, շնորհապարզև. (տե՛ս **դրուատագարդ**–ի օրինակը):

ՈՐՈՄՆԱՐԿՈՒ – ա., 1. որոմ գցող, որոմ ցանող, 2. փխբ. բանասարկու. «անհետ առնելով զխոհերս պղծահամբաւս որոմնարկուս երևութիցն նոցին» [Հիշ. Ե–ԺԲ: 67]:

Մի քանի բառարաններում վկայված է **որոմնացանու** բառը [ՆՀԲ, 2: 534, ԱԲ: 656, ՀԲԲ, 3: 586], որ հոմանիշ է բերվող օրինակին: Զուգահեռ մի ձև է նաև **որոմնացան**–ը, որը նույնպես հայտնի է բառարաններին: **Որոմնարկու** եզակի օրինակը լրացնում է այս շարքը:

ՊԱԿԱՄԻՄԱՅ – ա., սակավ հայտնի. «որ ըստ իս՝ են պակասիմաց ուսումնասիրաց անձանց» [Հիշ. Ե–ԺԲ: 315]:

ՍՔԱՆՉԱՊԷՍ – մ., հիանալի կերպով, սքանչելապես. «անարատ պահելով զկուսութիւն՝ սքանչապէս ծնաւ» [Հիշ. Ե–ԺԲ: 32]:

Բառարաններին հայտնի է **սքանչելապէս** բառը [իմնտ. ԲՀԼ, 1: 1031, ՆՀԲ, 2: 767, ԱԲ: 743], որի մի տարբերակ է նաև նշվող օրինակը [իմնտ. սքանչատես / սքաչելատես՝ ՀԲԲ, 4: 283]:

ՍՐԲԵՐԱՄ – ա., սուրբ խորհրդի շուրջ հավաքված. «Արդ, հայցեմ ամենեցուն սրբերամից լուսագգեստից կրոնաւորացդ [...] լինել ինձ աժա՛նդակ» [Հիշ. Ե–ԺԲ: 110]:

ՏՐԱՄԱՅՆՈՐՀՈՒՐԳ – ա., իմաստուն, շրջահայաց. «Ո՛վ հարսն Յիսուսի տրամախորհուրդ» [Հիշ. Ե–ԺԲ: 266]:

Գրիչը հավանաբար բառս կազմել է տրամախոհ, տրամախոհական, տրամախոհություն բառերի նմանությամբ [իմնտ. ԲՀԼ, 1: 1138, ՆՀԲ, 2: 896, ԱԲ: 792 և այլն]՝ դրանց հավելելով իր տարբերակը²⁹: Հիշատակարանս աչքի է ընկնում իր յուրատիպ լեզվով ու ոճով. **տրամախորհուրդ**–ից բացի՝ վերևում նշված **հոգիաստին** բառը նույնպես այս հիշատակարանում է վկայված:

ՔԱՅԼԱՅԵՂ – ա., արագաքայլ. «ի հովիտս դաշտացն քայլայեղ արա–գութեամբն ժամանեալ» [Հիշ. Ե–ԺԲ: 152]:

2. Բառակազմական կաղապարներ

Բառակազմական տեսանկյունից վերոբերյալ բառերն ունեն միմյանցից տարբեր պատկեր: Համեմատաբար մեծ թիվ են կազմում **արմատ + հոդակապ + արմատ** (SjS)³⁰ կաղապարով կազմված բառերը, ինչպես՝ **երփնազանց, զուարճածաղիկ, շնորհանուէր, շնորհապատիւ, քայլայեղ, յոզնայանց, յոզնախորտիկ, հոգիաստին, հաշտական, նահատակասէր**: Մյուս բառերը հիմնականում ներկայացնում են կաղապարման մեկական տեսակ: Այսպես, **սրբերամ՝** SS, **առաքելագիծ՝** SjS, **տրամախորհուրդ՝** ajS (խորհուրդ–ը արմատական դիտելու դեպքում), **անսպառապէս՝** aSja,

²⁹ Հայտնի է, որ **տրամ**–ը հունարենից հայերենին անցած նախածանցներից է. այս ածանցով ուղղակի պատճենմամբ են վերոնշյալ հյ. **տրամախոհ, տրամախոհություն** բառերը, տե՛ս **Մուրադյան Գ.**, նշվ. աշխ., էջեր 35 և 44: [G. Muradyan, Ibid., pp. 35, 44]. Ուստի տրամախորհուրդ–ը նույնպես կարող է այս բառերի շարքին դասվել:

³⁰ Կաղապարման այս և մնացյալ տարբերակների համար տե՛ս **Հովսեփյան Լ.**, Գրաբարի բառակազմությունը, Եր., 1987, էջեր 56–57: [Hovsep'yan L., Grabari barakazmutyuna, Er., 1987, pp. 56–57].

արտատրել՝ ajS^fa, **սքանչապէս՝** Sja, **շարագծող՝** SjSa, **ընդարինակագիր՝** aSjS, **բնաբանականութիւն՝** SjSaa, **որոմնարկու՝** SSa, **պակասիմաց՝** SS^f, **աղջախոհակ, գունագործել, բարեհամբաւեալ, հոգետուիչ՝** SjSa, **հորթ-վենի՝** Sa: **Գրուատագարդ** և **խաչընկալ** բառերում **գարդ, ընկալ** ձևայինները բաղադրված են գ և ընդ նախդիրներով. բառակազմության ժամանակ, սակայն, դրանք դիտվում են իբրև պատրաստի կաղապարներ. ուստի առաջինի կաղապարը կլինի՝ SjS, իսկ խաչընկալինը՝ SS:

Նշյալ բառացանկից եթե հանենք **անսպառապէս, արտատրել, հորթ-վենի, սքանչապէս, տրամախորհուրդ, երփնագանց** բառերը, որոնք ածանցմամբ են կազմված, այլև **եպերանք դնել** և **գաղափար առնուլ** դարձվածքները, ապա մյուս բառերը հիմնականում իսկական բարդություններն են՝ կազմված տարբեր խոսքի մասերի պատկանող բաղադրիչներից, որոնց պարզումն առանձին դեպքերում դժվարություն է հարուցում: Այս պարագայում բաղադրիչների խոսքիմասային պատկանելությունը որոշելու համար Լ. Հովսեփյանն առաջարկում է հաշվի առնել ոչ միայն տվյալ բառերի բառարանային իմաստները, այլև բարդության ներսում բաղադրիչների շարահյուսական հարաբերությունները³¹: Այսպես, **նահատակասէր** բառի երկու արմատներն էլ, առանձին վերցրած, գոյական են, մինչդեռ այս բարդության մեջ **սէր** արմատը բայական նշանակությամբ է գործածված, արտահայտում է «նահատակ սիրող» իմաստը (բարդության ներսում առկա է խնդրային հարաբերություն), ուրեմն՝ կաղապարը կլինի՝ Գ+Բ: Նույն կերպ և **ընդարինակագիր** բարդությունը. եթե բառս ունենար «ձեռագիր, մատյան» իմաստը (այսինքն՝ այն ձեռագիրը, որն օրինակ է ծառայել գրչի համար՝ նախօրինակը), ապա նրա կաղապարը կլիներ Գ+Գ, սակայն բառն արտահայտում է «ընդօրինակագրի, մատյանը գրողի» իմաստը, ուստի այս դեպքում էլ գործ ունենք Գ+Բ կաղապարի հետ: Նման դեպքերում, երբ բարդության երկրորդ բաղադրիչը բայանուն է կամ բայական նշանակությամբ է գործածված, կարելի է ասել, որ բարդության մեջ առաջին բաղադրիչն էլ հիմնականում հայցական հոլովով դրված ուղիղ խնդրի պաշտոն է ստանում: Այս նկատել է դեռևս Ա. Մեյեն հայերենի բառաբարդմանն անդրադառնալիս³²: Լավագույն օրինակը, թերևս, տալիս են **ք** հոգնակերտով բաղադրիչները, քանի որ բարդության ներսում տեղի է ունենում **ք-u** անցում՝ **մեղք - մեղսասէր, բանք - բանսարկու** և այլն:

Այս սկզբունքով քննելով մեր ներկայացրած նորահայտ բառերը՝ դրանց խոսքիմասային կաղապարները կունենան հետևյալ պատկերը.

Գ+Գ՝ **շնորհապատիւ, հոգիաստին,**

Գ+Բ՝ **երփնագանց**³³, **նահատակասէր, հաշտական, ընդօրինակագիր, շնորհանուէր, որոմնարկու, խաչընկալ, հոգետուիչ, առաքելագիծ, գունագործել, քայլայեղ, դրուատագարդ,**

Ա+Գ՝ **սրբերամ, զուարճածաղիկ, աղջախոհակ, յոգնախորտիկ, յոգ-նայանց, բնաբանականութիւն,**

31 Տե՛ս Հովսեփյան Լ., նշվ. աշխ., էջեր 139-141: [Hovsep'yan L., Ibid, pp. 139-141].

32 Տե՛ս Մեյե Ա., նշվ. աշխ., էջ 88: [Meye A., Ibid., pp. 88].

33 Հմտ. օրինագանց, կարգագանց բառերի հետ, որ նշանակում է «օրենքը, կարգը զանց առնող»:

ՄԺԲ՝ **պակասիմաց** (գրաբ. **իմանամ** բայի կատարյալի հիմքից), **շաբազծող** (շարքով գծող), **բարեհամբաւեալ**:

Նկատենք նաև, որ նշյալ նորահայտ բառերի մեծ մասը կազմված է գրիչների լեզվում ամենատարածված բառերով կամ արմատներով: Եվ ինչպես բառակազմական կաղապարների վերլուծությունն է ցույց տալիս, հիշատակագիրներն առավելապես նախընտրում են բառաբարդումը՝ հոդակապով բարդությունների բացահայտ առավելությամբ:

Ստորև նշենք մի քանի այդպիսի բառեր կամ արմատներ, որոնք թե՛ առանձին, և թե՛ բարդության կազմում լայն կիրառություն ունեն ինչպես քննվող, այնպես էլ տարբեր շրջանի հիշատակարաններում՝

Յոգն. ինքնուրույն կիրառություն չունի, հիմնականում հանդես է գալիս բառաբարդման ժամանակ³⁴՝ գործածվելով միայն որպես բարդության առաջին բաղադրիչ՝ **յոգնատոչոր** [Հիշ. Ե-ԺԲ: 142], **յոգնախորտիկ** [Հիշ. Ե-ԺԲ: 181], **յոգնայանց** [Հիշ. Ե-ԺԲ: 219], **յոգնագան** [Հիշ. Ե-ԺԲ: 127], **յոգնաբեղուն** [Հիշ. Ե-ԺԲ: 178], նաև անհոդակապ՝ **յոգնեղկելի** [Հիշ. ԺԳ: 507] և այլն: Ըստ որում՝ կարելի է, թերևս, ասել, որ այս բաղադրիչով բարդություններն առավելապես գրաբարյան շերտին են պատկանում: Վերջինի օգտին է խոսում նաև այն, որ ՆՀԲ-ում **յոգն** առաջնաբաղադրիչով բարդված գլխաբառերի թիվը 127 է, ՄՀԲ-ում՝ 16, ՆԲՎԱ-ում՝ 12: Ըստ որում՝ մեր կարծիքով, նշյալ 16 կամ 12 բառերն էլ, կամ առնվազն դրանց կեսից ավելին, ինչպես՝ **յոգնադրուատ**, **յոգնահառաչ**, **յոգնահոծ**, **յոգնամեղ**, **յոգնազեղուն**, **յոգնաշաւիղ** կամ **յոգնաբոյլ**, **յոգնահրաշ**, **յոգնայարգ**, **յոգնաշխատ** և այլն, ոչ թե՛ զուտ միջինհայերենյան կամ վաղաշխաբաբարյան բառեր են, այլ՝ հիշյալ ժամանակաշրջանների երկերում կիրառված գրաբարաբանություններ:

Բազմ (<բազում). հոմանիշ է **յոգն** արմատին: Առանձին կիրառությունից գատ՝ ակտիվորեն մասնակցում է նաև բառաբարդմանը՝ դարձյալ հանդես գալով հիմնականում իբրև բարդության առաջին բաղադրիչ, և գրիչների լեզվում էլ խիստ հաճախադեպ է՝ **բազմայարմար** և **բազմապայծառ** [Հիշ. Ե-ԺԲ: 203], **բազմամեղ** [Հիշ. ԺԳ: 17], **բազմաշխատ** [Հիշ. ԺԳ: 23] և այլն: Նկատենք, որ եթե **յոգն** և **բազմ** արմատները գրաբարում հավասարապես ակտիվորեն մասնակցել են բառակազմությանը, ապա միջինհայերենյան շրջանում և հատկապես արդի հայերենում դրանցից առավել կենսունակ է **բազմ**-ը, իսկ **յոգն**-ը չի մասնակցում նորակազմություններին³⁵:

Շնորհ. հիշատակարաններում տարածված է ոչ միայն բառիս ինքնուրույն գործածությունը (ինչպես՝ «Եւ առ զշնորհս զայս մեծ» [Հիշ. Ե-ԺԲ: 42], «Շնորհաւքն Քրիստոսի ես՝ Եղիայ [...] ստացա (sic!)» [Հիշ. Ե-ԺԲ: 62] և այլն), այլև առատորեն վկայված է զանազան բարդություններում, ըստ որում՝ թե՛ նախադաս, թե՛ վերջադաս: Դարձյալ գերակշռում են հոդակա-

34 Ածանցմամբ հանդիպում է **յոգնակի** բառում, որը հիշատակարաններում սահմանափակ գործածություն ունի՝ «...յոգնակի սիրով գրեցի զաս» [Հիշ. ԺԳ: 526]:

35 Է. Աղայանի բառարանում **յոգն** (արդի ուղղագրությամբ՝ **հոգն**) արմատով արձանագրված են հոգնառատ, հոգնախումբ, հոգնաչար, հոգնապանծ բառերը [ԱՀԲԲ, 1: 886], որոնք, թերևս, հնաբանություններ կարելի է համարել: Այդպես են վարվել ժամանակակից հայոց լեզվի ակադեմիական բառարանի կազմողները՝ այդօրինակ բառերի կողքին նշելով **հոգ**, այսինքն՝ հնացած, հմնտ. հոգնաթախիծ (հոց.), հոգնադեն (հոց.), իսկ այլ դեպքերում հղում են **բազմ**-ով բառերին [ԺՀԲԲ, 3: 368]:

պավոր իսկական բարդությունները.

ա. բարդության սկզբում՝ **շնորհապատիւ** [Հիշ. Ե-ԺԲ: 54], **շնորհատրութիւն** [Հիշ. Ե-ԺԲ: 56], **շնորհաբաշխութիւն** [Հիշ. Ե-ԺԲ: 56], **շնորհատուող** [Հիշ. Ե-ԺԲ: 64], **շնորհակիր** [Հիշ. Ե-ԺԲ: 65], **շնորհազարդ** [Հիշ. ԺԳ: 89], **շնորհատու** [Հիշ. ԺԳ: 46], անհոդակապ՝ **շնորհընկալ** [Հիշ. Ե-ԺԲ: 64] և այլն,

բ. բարդության վերջում՝ **մեծաշնորհ** [Հիշ. Ե-ԺԲ: 80], **ամենաշնորհ** [Հիշ. Ե-ԺԲ: 84], **երանաշնորհ** [Հիշ. Ե-ԺԲ: 99], **բազմաշնորհ** [Հիշ. Ե-ԺԲ: 105], **բարեշնորհ** [Հիշ. Ե-ԺԲ: 117], **առաքելաշնորհ** [Հիշ. Ե-ԺԲ: 172], **առատաշնորհ** [Հիշ. ԺԳ: 102], **աստուածաշնորհ** [Հիշ. ԺԳ: 151] և այլն:

Մեղ(ք/ս). ստույգ վիճակագրություն չկա, բայց կարելի է ասել, որ գրիչների լեզվում ամենատարածված բառերից է, հանդես է գալիս ինչպես առանձին, այնպես էլ բարդություններում՝ իբրև առաջին կամ վերջին բաղադրիչ.

ա. բարդության սկզբում՝ **մեղապարտ** [Հիշ. Ե-ԺԲ: 14], **մեղսամակարդ** [Հիշ. Ե-ԺԲ: 45], **մեղսաթաւալ** [Հիշ. Ե-ԺԲ: 74], **մեղսաքաւիչ** [Հիշ. Ե-ԺԲ: 75], **մեղադիր** [Հիշ. ԺԳ: 177], **մեղսասէր** [Հիշ. ԺԳ: 233] և այլն:

բ. բարդության վերջում՝ **բազմամեղ** [Հիշ. Ե-ԺԲ: 35], **յոզմամեղ** [Հիշ. Ե-ԺԲ: 37], **կամամեղ** [Հիշ. Ե-ԺԲ: 54], **ծանրամեղ** [Հիշ. ԺԳ: 170] և այլն:

Գրիչների լեզվում հաճախադեպ են նաև ածանցմամբ կազմված հետևյալ բառերը՝ **մեղաւոր** [Հիշ. ԺԳ: 209], **անմեղադիր** [Հիշ. ԺԳ: 216], **անմեղադրութիւն** [Հիշ. ԺԳ: 230]:

Նոգի. բառի կիրառությունը տարածված է հիշատակարաններում, բացի պարզ (հոգի) և ածանցավոր (հոգեկան, հոգևոր, հոգևորական, հոգեղէն) կազմություններից, որոնք առատորեն վկայված են գրավոր այս հուշարձաններում, բառս մասնակցում է նաև իսկական բարդությունների կազմությանը՝ հանդես գալով հիմնականում որպես առաջին, իսկ երբեմն էլ՝ վերջին բաղադրիչ: Նախադաս դիրքում հոդակապին միանալիս արմատի *ի* ձայնավորը ոչ միշտ է հնչյունափոխվում (*ի+ա>ե*)՝ այդպիսով երբեմն առաջացնելով զուգաձևություններ, ինչպես՝ **հոգիաբուղխ** [Հիշ. Ե-ԺԲ: 64] և **հոգեբուղխ** [Հիշ. Ե-ԺԲ: 71], **հոգիանորոգ** [Հիշ. Ե-ԺԲ: 67] և **հոգենորոգ** [Հիշ. ԺԳ: 393] և այլն: Մեր վկայաբերած նորահայտ երկու բառերից մեկում հնչյունափոխությունը կատարվել է (հոգետուիչ), իսկ մյուսում՝ ոչ (հոգիաստին): Այլ օրինակներ՝

ա. բարդության սկզբում՝ **հոգիախաւս** [Հիշ. Ե-ԺԲ: 31], **հոգէպահ** [Հիշ. Ե-ԺԲ: 42], **հոգեզարդ** [Հիշ. Ե-ԺԲ: 65], **հոգէկիր** [Հիշ. Ե-ԺԲ: 70], **հոգէշահ** [Հիշ. Ե-ԺԲ: 82], **հոգեշնորհ** [Հիշ. Ե-ԺԲ: 109], **հոգեսէր** [Հիշ. Ե-ԺԲ: 117], **հոգեկեցոյց** [Հիշ. Ե-ԺԲ: 119], **հոգեպատում** [Հիշ. ԺԳ: 238], **հոգեզուարթ** [Հիշ. ԺԳ: 238], **հոգեշունչ** [Հիշ. ԺԳ: 278], **հոգիապայծառ** [Հիշ. ԺԳ: 304], **հոգիազգեաց** [Հիշ. ԺԳ: 345], **հոգէշուք** [Հիշ. ԺԳ: 350], **հոգիահրաշ** [Հիշ. ԺԳ: 433] և այլն:

բ. բարդության վերջում՝ **սրբահոգի** [Հիշ. ԺԳ: 250], **բարէհոգի** [Հիշ. ԺԳ: 281], **հեզահոգի** [Հիշ. ԺԳ: 352], **մեծահոգի** [Հիշ. ԺԳ: 428], անհոդակապ՝ **բարիհոգի** [Հիշ. ԺԳ: 463] և այլն:

Ամփոփում

Նոր և նորագույն շրջանի հայ բառարանագրության աղբյուրացանկերը վկայում են, որ հիշատակարանները շարունակաբար քննության են ենթարկվել բառարանագիրների կողմից: Ըստ որում՝ գրավոր հուշարձաններս հարուստ նյութ են տրամադրել հայերենի տարբեր շրջափուլերին վերաբերող բառարաններին, որոնց հեղինակների մանրագնին աշխատանքի արդյունքում, կարելի է ասել, որ հիշատակարանների բառապաշարի զգալի չափն այսօր արտացոլված է այդ բառարաններում: Մյուս կողմից՝ հարկ է նշել, որ քննվող աղբյուրները դեռևս չեն սպառել իրենց, և նոր ուսումնասիրությունները լրացնում են բառարանագրությանն անհայտ բառերի, բառատարբերակների թիվը, կատարում են տարբեր ճշգրտումներ: Այս ամենը նպաստում է պատմական բառագիտությանն ու լեզվական տարաբնույթ հարցերի քննությանը:

Բառակազմական տեսանկյունից հիշատակագիրների կերտած բառերը հիմնականում բարդ կամ բարդ ածանցավոր են, իսկ ամենատարածված կաղապարը՝ հոդակապով իսկական բարդությունը:

Խաչիկ Ա. Հարությունյան – մասնագիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայոց լեզվի պատմությունը, մասնավորապես պատմական բառագիտությունն ու պատմական քերականությունը: Զուգահեռաբար մասնագիտանում է հայ ձեռագրագիտության և հնագրության բնագավառներում:

Էլ. huugե՝ khachik.har@gmail.com

Գործածված աղբյուրների և բառարանների հապավումներ՝

ԱԲ – **Ազերեան հ. Մ.**, **Ճէլալեան հ. Գ.**, Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Վենետիկ, 1865, վերահրատ. Անթիլիաս, 1988 [**AB** – **Awgorean h. M.**, **Čelalean h. G.**, *Ařjern bařaran haykazean lezui, Venetik, 1865, verahrat. Ant'iliias, 1988*]:

ԱՀԲԲ – Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, հատ. 1–2, Եր., 1976 [**AHBB** – **Ałayan Ė. B.**, *Ardi hayereni bac'atrankan bařaran, hat. 1–2, Er., 1976*]:

ԲՀ – Բառգիրք հայոց, քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Ամալյան Հ. Մ., Եր., 1975 [**BH** – *Bařgirk' hayoc', k'nnakan bnagirē, ařařabanē ew canot'agrut'yunnerē Amalyan H. M., Er., 1975*]:

ԲՀԼ, 1 – Սեբաստացի Մ., Բառգիրք հայկազեան լեզուի, հատ. Ա, Վենետիկ, 1749 [**BHL, 1** – **Sebastac'i M.**, *Bařgirk' haykazean lezui, hat. I, Venetik, 1749*]:

ԲՄՀ – Բիւզանդացի Ն., Բառագիրք ստորին հայերէնի ի մատենագրութեանց ժԱ–ժԷ դարուց, հրատարակութեան պատրաստեց Մինասեան Մ., Ժնն, 2000 [**BSH** – **Biwzandac'i N.**, *Bařgirk' storin hayerēni i matenagrut'eanc' ŽA-ŽĖ daruc', hratarakut'ean patrastec'Minasean M., Žnew, 2000*]:

ԳՀԲ – Ղազարյան Ռ. Ս., Գրաբարի հոմանիշների բառարան, Անթիլիաս–Լիբանան, 2006 [**GHB** – **Łazaryan R. S.**, *Grabari homaniřneri bařaran, Ant'iliias-Libanan, 2006*]:

ԳՓ.ԲՀԼ – Բառգիրք հայկազեան լեզուի, որ է երկասիրութիւն **Փէշտըմալձեան** պատուելի **Գրիգոր** մեծիմաստ վարժապետի ի պէտս դիւրութեան համբակց վարժելոց ի հայկական ուսմունս, հատ. Ա, Կ. Պոլիս, 1844, հատ. Բ, Կ. Պոլիս, 1846 [**GP'.BHL** – *Bařgirk' haykazean lezui, or ē erkasirut'yun P'ēřtamalčean patueli Grigor mecimast varžapeti i pēts diwrut'ean hambakac' varželoc' i haykakan usmuns, hat. A, K.*

Polis, 1844, hat. B, K. Polis, 1846]:

ԺՀԼԲԲ – Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատ. 1-4, Եր., 1969-1980 [**ՉԼԼԲԲ** – Žamanakakic' hayoc' lezvi bac'atrankan bařaran, hat. 1-4, Er., 1969-1980]:

ԼՀԳԲ – Հովհաննիսյան Լ. Շ., Գրաբարի բառարան. նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Եր., 2010 [**ԼԼԳԲ** – **Hovhannisyan L. Š.**, Grabari bařaran. nor haykazyan bařaranum č'vkayvac bařer, Er., 2010]:

ՀԱԲ – Աճառեան Հր., Հայերէն արմատական բառարան, հատ. 1-4, Եր., 1926, վերահրատ. Եր., 1971 [**HAB** – **Ačařean Hr.**, Hayerēn armatakan bařaran, hat. 1-4, Er., 1926, verahrat. Er., 1971]:

ՀԲԲ – Հայերէն բացատրական բառարան, հատ. 1-4, կազմեց Մալխասեանց Ստ., Եր., 1944-1945 [**HBB** – Hayerēn bac'atrankan bařaran, hat. 1-4, kazmec' **St. Malxaseanc'**, Er., 1944]:

ՀԻԶ. Ե-ԺԲ – Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դարեր, աշխատասիրությանը Մաթևոսյան Ա., Եր., 1988 [**Hiš. E-ŽB** – Hayeren jeřagrerı hiřatakaraner, E-ŽB dd., ařxatasırut'yamb **Mat'evosyan A.**, Er., 1988]:

ՀԻԶ. ԺԳ – Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Մաթևոսյան Ա. Ս., Եր., 1984 [**Hiš. ŽG** – Hayeren jeřagrerı hiřatakaraner, ŽG dar, kazmec' **Mat'evosyan A. S.**, Er., 1984]:

ՀԻԶ. ԺԴ – ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Խաչիկյան Լ. Ս., Եր., 1950 [**Hiš. ŽD** – ŽD dari hayeren jeřagrerı hiřatakaraner, kazmec' **Xač'ikyan L. S.**, Er., 1950]:

ՀԻԶ. ԺԵ, Ա – ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա (1401-1450 թթ), կազմեց Խաչիկյան Լ. Ս., Եր., 1955 [**Hiš. ŽE, A** – ŽE dari hayeren jeřagrerı hiřatakaraner, masn A (1401-1450 t't.), kazmec' **Xač'ikyan L. S.**, Er., 1955]:

ՀԻԶ. ԺԷ, Բ – Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1621-1640 թթ.), հատ. Բ, կազմեցին՝ Հակոբյան Վ., Հովհաննիսյան Ա., Եր., 1978 [**Hiš. ŽE, B** – Hayeren jeřagrerı ŽE dari hiřatakaraner (1621-1640 t't.), hat. B., kazmec'in **Hakobyan V., Hovhannisyan A.**, Er., 1978]:

ՀՍԲ – Զահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, խմբագրությամբ և առաջարանով՝ Սարգսյան Վ., Եր., 2010: [**HSB** – **Jahukyan G.**, Hayeren stugabanakan bařaran, xmbagrut'yamb **Sargsyan V.**, Er., 2010].

ՄՀԲ – Ղազարյան Ռ. Ս., Միջին հայերենի բառարան, Եր., 2009 [**MHB** – **Łazaryan R. S.**, Miřin hayereni bařaran, Er., 2009]:

ՆԲՎԱ – Պողոսյան Ն., Նորահայտ բառեր վաղաշխարհաբարյան աղբյուրներում (16-18-րդ դդ.), Եր., 2014: [**NBVA** – **Połosyan N.**, Norahayt bařer vařařarhabaryan ařbyurnerum (16-18-rd dd.), Er., 2014].

ՆՀԲ – Նոր բառգիրք հայկազեան լեզուի, երկասիրություն երից վարդապետաց յաշակերտությունէ մեծին Մխիթարայ արքաօր Աւետիքեան հ. Գ., Սիրմելեան հ. Խ., Աւգերեան հ. Մ., հատ. 1-2, Վենետիկ, 1836-1837, վերահրատ. Երևանի համալսարանի հրատ., 1979 [**NHB** – Nor bařgirk' haykazean lezui, erkasırut'ıwn eric' vardapetac' yařakertut'enē mecin Mxit'aray abbahor **Awetik'ean h. G., Siwrmēlean h. X., Awgerean h. M.**, hat. 1-2, Venetik, 1836-1837, verahrat. Erevani hamalsarani hrat., 1979]:

ՌՂԳԲ – Ղազարյան Ռ. Ս., Գրաբարի բառարան, հատ. 1-2, Եր., 2000 [**ՂԼԳԲ** – **Łazaryan R. S.**, Grabari bařaran, hat. 1-2, Er., 2000]:

Summary

ARMENIAN LEXICOGRAPHY FROM THE SECOND HALF OF THE XVIII CENTURY AND THE COLOPHONS OF THE ARMENIAN MANUSCRIPTS

Newfound words in the colophons of the X–XII centuries

Khachik A. Harutyunyan

Key words – scribes, lexicography, word formation structures, historical lexicology, Classical Armenian, Middle Armenian.

Armenian manuscripts are rich in colophons which provide abundant material for dictionaries covering different periods of the development of Armenian language.

In this article, we examine the relationship between Armenian dictionaries and colophons, which we present in three groups:

- a. words, which are known to dictionaries only from the colophons.
- b. words, which are known to dictionaries in one example, but the colophons give other testimonies.
- c. words attested in dictionaries, the older usages of which we find in the colophons of the Armenian manuscripts.

A number of new words that are not attested in Armenian dictionaries is also presented with the study of their formation structures.

Резюме

ПАМЯТНЫЕ ЗАПИСИ АРМЯНСКИХ РУКОПИСЕЙ И АРМЯНСКАЯ ЛЕКСИКОГРАФИЯ СО ВТОРОЙ ПОЛОВИНЫ XVIII ВЕКА

Новые слова в колофонах X–XII веков

Хачик А. Арутюнян

Ключевые слова – переписчики, лексикография, историческая лексикология, структуры словообразования, древнеармянский, среднеармянский.

Армянские рукописи богаты памятными записями (**колофонами**) предоставляющими обильный материал для словарей охватывающих разные периоды развития армянского языка.

В статье рассматривается связь между лексикой вошедшей в армянские словари и образцами почерпнутыми из колофонов:

- a. вошедшие в словари слова известные только из памятных записей.
- б. слова, которые зафиксированы в словарях по одному примеру, а памятные записи предоставляют другие свидетельства.
- в. слова, вошедшие в словари со ссылкой на источник, более ранние свидетельства которые представлены в колофонах армянских рукописей.

В статье рассматриваются также ряд не вошедшие в словари новые слова и изучается их словообразовательная структура.